

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
 (Փաստաթղթային կոդ՝ Կ-162-23.10.2017, 05.09.2018-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 4-ի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի հոդված 4-ի 1-ին մասի 1-ին կետից հանել «և այլ գործունեությունն» բառերը:	Չի ընդունվել: Սահմանումը ձևակերպված է Մաքսային Միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ համաձայնագրի տրամաբանությամբ, որտեղ այլ գործունեություն իրականացնելու հնարավորությունը ազատ տնտեսական գոտում առկա է:	Չի ընդունվել:

2.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 4-ի 1-ին մասի 8-րդ կետ	Նախագծի հոդված 4-ի 1- ին մասի 8-րդ կետի վերջում ավելացնել «լիազոր մարմնի որոշմամբ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 5-ի 4-րդ մասի 5-րդ կետ	Նախագծի հոդված 5-ի 4- րդ մասի 5-րդ կետը հանել:	Չի ընդունվել: Չափանիշի առկայությունը կարևոր է հատկապես մասնավոր նախաձեռնությամբ ստեղծվող ԱՏԳ- երի հայտերը գնահատելու համար:	Չի ընդունվել:
4.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 5-ի 4-րդ մասի 6-րդ կետ	Նախագծի հոդված 5-ի 4- րդ մասի 6-րդ կետը հանել:	Չի ընդունվել: Չափանիշի առկայությունը կարևոր է հատկապես մասնավոր նախաձեռնությամբ ստեղծվող ԱՏԳ- երի հայտերը գնահատելու համար:	Չի ընդունվել:
5.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 5-ի 2-րդ մասում ավելացնել նոր 11-րդ կետ	Նախագծի հոդված 5-ի 2- րդ մասում ավելացնել նոր 11-րդ կետ` հետևյալ խմբագրությամբ. «11) ակնկալվող պետական աջակցության ձևերը:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 7-ի 2-րդ մաս	Նախագծի հոդված 7-ի 2- րդ մասը փոխարինել նոր մասերով` հետևյալ	Ընդունվել է մասամբ: 2.1 Չի ընդունվել, հաշվի առնելով նախագծի հոդված 4-ի 8-րդ մասը (որով սահմանվում է ԱՏԳ գործարկման հասկացությունը) ,	Ընդունվել է մասամբ:

			<p>խմբագրությամբ.</p> <p>2.1. Ազատ տնտեսական գոտու կազմակերպչի վերաբերյալ կառավարության որոշումն ընդունելուց հետո կառավարությունը, հիմք ընդունելով կազմակերպչի կողմից ծառայությունների մատուցման մասին հրապարակային առաջարկը, ազդարարում է տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների շահագործողներ ներառելու գործընթացի</p>	<p>հողված 5-ի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, որով սահմանվում են ԱՏԳ գործարկման վերջնաժամկետը և գործունեության ժամկետները և նույն հողվածի 7-րդ մասը, որով կարգավորվում են ԱՏԳ գործարկման վերջնաժամկետի փոփոխման դեպքերը:</p> <p>2.2 2-րդ նախադասությունն ընդունվել է: Նախագծում առկա ձևակերպումը ընդհանուր առմամբ մոտարկված է ԵԱՏՄ փորձին:</p> <p>2.3 Ընդունվել է մասնակի, լրացվել է 3-րդ նոր կետով:</p> <p>2.4. Չի ընդունվել: Նախագծով նախատեսված ձևակերպումը չի հակասում առաջարկի տրամաբանությանը բացի այդ պարզ չեն տվյալ ԱՏԳ կազմակերպչի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման իրավական հիմքերը:</p>	
--	--	--	---	--	--

			<p>մեկնարկը և հայտեր ընդունելու ժամկետները: 2.2. Շահագործողների ռեեստրում ներառվում են այն հայտատուները, որոնց գործարար ծրագրի վերաբերյալ Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա Կառավարությունը որոշում է հայտատուին ներառել տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում: Տվյալ ազատ տնտեսական</p>	
--	--	--	--	--

			<p>գոտու կազմակերպիչը կամ նրա հետ փոխկապակցված անձինք (այդ թվում իրավաբանական) չեն կարող լինել տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործող: 2.3. Շահագործողների ռեեստրում ներառելու վերաբերյալ կառավարության որոշումը ներառում է տվյալ տնտեսական գոտում շահագործողի կողմից իրականացման ենթակա տնտեսական</p>	
--	--	--	---	--

			<p>գործունեության տեսակները, տվյալ ազատ տնտեսական գոտու անվանումը (անհրաժեշտության դեպքում շահագործողի տնտեսական գործունեություն իրականացնելու վայրը), տվյալ ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետով պայմանավորված տվյալ շահագործողի շահագործողների ռեեստրում ներառված լինելու ժամկետը: 2.4. Շահագործողների</p>		
--	--	--	--	--	--

			<p>ռենտորում ներառվելու վերաբերյալ կառավարության որոշումը հիմք է տվյալ շահագործողի և տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպչի միջև շահագործելու մասին պայմանագիր կնքելու, որից հետո նաև տվյալ ազատ տնտեսական գոտու կազմակերպչի հետ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման համար:</p>	
--	--	--	--	--

7.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 7-ի 11-րդ կետ	Նախագծի հոդված 7-ի 11-րդ կետի 3-րդ նախադասությունը հանել:	<p>Չի ընդունվել:</p> <p>ԵԱՏՄ օրենսդրության համաձայն ազատ տնտեսական գոտում կարող են գործունեություն իրականացնել շահագործողները և շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:</p> <p>Ազատ մաքսային գոտի մաքսային ընթացակարգը</p> <p>կարող է կիրառվել ամբողջ ազատ տնտեսական գոտում կամ դրա մի մասում: Արտոնյալ ռեժիմ կիրառվում է միայն վերոնշյալ ընթացակարգով ներմուծված ապրանքների համար:</p> <p>Ազատ տնտեսական գոտում գործունեության տեսակներ կարող են իրականացնել նաև շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շահագործողների համար նախատեսված արտոնությունների կիրառման:</p>	Չի ընդունվել:
8.	Աժ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի հոդված 12-ի 1-ին կետ	Նախագծի հոդված 12-ի 1-ին կետից հանել «և այլ գործունեության» բառերը:	<p>Չի ընդունվել:</p> <p>Սահմանումը ձևակերպված է Մաքսային Միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ</p>	Չի ընդունվել:

				<p>համաձայնագրի տրամաբանությամբ, որտեղ այլ գործունեություն իրականացնելու հնարավորությունը ազատ տնտեսական գոտում առկա է:</p>	
9.	<p>ԱԺ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան</p>	<p>Նախագծի հոդված 13-ի 4-րդ կետ</p>	<p>Նախագծի հոդված 13-ի 4-րդ կետը հանել:</p>	<p>Չի ընդունվել՝ հիմք ընդունելով Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 455-րդ հոդվածի 5-րդ կետի 4-րդ ենթակետը՝ կարող է սահմանվել, որ սույն Օրենսգրքի 203–րդ հոդվածի 2-րդ (ԱՏԳ տարածքը պետք է ապահովված լինի մաքսային հսկողության իրականացման համար հարմարություններով:</p> <p>ԱՏԳ տարածքը համապատասխան հարմարություններով ապահովելուն ներկայացվող պահանջները՝ ներառյալ այդ տարածքի սահմանագծի երկայնքով պարսպապատման 7 տեսահսկման համակարգի տեղավորման պահանջները, սահմանվում են անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:</p> <p>ԱՏԳ տարածքում հսկիչ–անցագրային ռեժիմի ապահովումը՝ ներառյալ այդ տարածք անձանց մուտք գործելու կարգի սահմանումը, իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:) և 4-րդ (Ապրանքների ներմուծումը ԱՏԳ</p>	<p>Չի ընդունվել:</p>

			<p>տարածք, բացառությամբ նավահանգստային ԱՏԳ եւ լոգիստիկ ԱՏԳ, իրականացվում է մաքսային մարմնին այդ ներմուծման մասին ծանուցելու միջոցով, մինչդեռ ապրանքների արտահանումը ԱՏԳ տարածքից իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:</p> <p>Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծումն իրականացվում է մաքսային մարմնի թույլտվությամբ:</p> <p>Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել նշված ծանուցումը ներկայացնելու և նշված թույլտվությունները տրամադրելու կարգը, ինչպես նաեւ այդպիսի ծանուցումների և թույլտվությունների ձեւերը:</p> <p>Նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ տարածքից այն ապրանքների մեկնման դեպքում, որոնք այդպիսի ԱՏԳ-ների տարածքի սահմաններից դուրս ձեւակերպված են «արտահանում» մաքսային ընթացակարգով, «վերաարտահանում» մաքսային ընթացակարգով, «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգով,</p>	
--	--	--	--	--

				<p>«Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով, հատուկ մաքսային ընթացակարգով, նավահանգստային ԱՏԳ կամ լոգիստիկ ԱՏԳ ռեգիդենտը (մասնակիցը, սուբյեկտը) մաքսային մարմին է ներկայացնում տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ բեռնաթափման վայր (նավահանգիստ, օդանավակայան) է հանդիսանում Միության մաքսային տարածքից դուրս գտնվող վայրը:</p> <p>Մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությամբ կարող է սահմանվել ԱՏԳ տարածք ապրանքների ներմուծման եւ ԱՏԳ տարածքից ապրանքների արտահանման՝ սույն կետով նախատեսվածից տարբերվող կարգ:) կետերը չեն կիրառվում.</p>	
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը հանել, քանի որ 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն «կազմակերպիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ	Ընդունվել է:	Ընդունվել է:

սահմանված կարգով
կառուցապատում,
օգտագործում է ազատ
տնտեսական գոտու
ինժեներական
կառույցները և
ենթակառուցվածքները,
ինչպես նաև ապահովում
է սույն օրենքի 6-րդ
հոդվածով սահմանված
պահանջները»: Իսկ նույն
հոդվածի նույն մասի 4-րդ
կետի համաձայն
«կազմակերպիչը
ապահովում է ազատ
տնտեսական գոտուն
սույն օրենքով
ներկայացվող
պահանջների
կատարումը»: Մինչդեռ,
պետք է նկատի ունենալ,
որ նախագծի 6-րդ
հոդվածը վերաբերում է
ազատ տնտեսական
գոտուն ներկայացվող
պահանջներին, ինչն

			արդեն իսկ նախատեսված է նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:		
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մաս	12-րդ հոդվածի 1-ին մասից հանել «օրենսդրությամբ սահմանվող» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
12.	ՀՀ կառավարություն	Նախագծի 18-րդ հոդված	18-րդ հոդվածը հանել, քանի որ 18-րդ և 2-րդ հոդվածների ուժի մեջ մտնելու ժամկետների կարգավորումները համընկնում են:	Ընդունվել է:	Ընդունվել է: